ՀՈԲԵԼՅԱՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԵՒ ԱՒՍՏՐԻՈՅ ՄԷՋ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԻ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐԸ

Կենտրոնական Եւրոպիոյ եւ Սկանդինաւիոյ Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Գ. Գրիգորեանի ծննդեան 70-ամեակի եւ Աւստրիոյ մէջ հովուական-առաջնորդական գործունէութեան 40-ամեակի զոյգ յոբելեանները Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն արժանավայել կերպով տօնախմբուեցան Վիեննայի մէջ: Այս ուրախ առիթներով Ամենայն Հայոց Ընդհանրական եւ Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. շնորհազարդ Հայրապետը 6 Օգոստոսի 2002 թուակիր սրբատառ կոնդակով «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ բարձր շքանշանը շնորհեց Սրբազան Հօր (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, Ը, էջ 25): Շնորհաւորական հեռագիր եւ նամակ ուղարկեցին՝ Աւստրիոյ Հանրապետութեան մեծարգոյ նախագահ Դր. Թոմաս Կլեստիլ, Վարչապետ Դր. Վոլֆգանգ Շիւսել եւ Կրթութեան նախարարուհի Տիկ. Դր. Էլիզաբեթ Գերըր:

Առաջին հանդիսութիւնը, որ միջեկեղեցական երեկոյեան ժամերգութիւն մըն էր, տեղի ունեցաւ Շաբաթ 12 Հոկտ. 2002 թ. ժամը 18-ին՝ հայ առաքելական Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ մէջ: Սոյն աղօթքի ժամուն մասնակցեցան Վիեննայի բոլոր քրիստոնէական Եկեղեցիներու եւ Համայնքներու ներկայացուցիչները:

Օրուան գլխաւոր քարոզիչն էր Դր. Հելմուտ Քրէցըլ, հռովմէական-կաթողիկէ Օժանդակ Եպիսկոպոսը Վիեննայի Կարդինալ Դր. Քրիստոֆ Շէօնբոռնի, որ խօսեցաւ Եկեղեցւոյ միութեան եւ Եկեղեցիներու զօրակցութեան մասին եւ դրուատեց Մեսրոպ արքեպիսկոպոսի միջեկեղեցական գործունէութիւնը ի նպաստ Եկեղեցիներու միութեան: Աւետարանական Եկեղեցւոյ կողմանէ յաւուր պատշաճի խօսքեր արտասանեցին՝ պատուելի Դրոֆ. Վերնըր Հոռն եւ Դր. Միքայէլ Բիւնքըր: Վերջինս ներկայացուց նաեւ Մեսրոպ Սրբազանի 1999 թուին գրած արդիական «Հաւատոյ Հանգանակ»-ը եւ հրաւիրեց հաւատացեալց բազմութիւնը՝ որպէսզի միասնաբար արտասանեն զայն:

Ցոբելեար Սրբազանը իր խօսքին մէջ ողջունեց հիւրերը, պատմեց իր Աստրիոյ մէջ 40 տարուան հովուական գործունէութեան մասին, փառք տուաւ Ամենակալին Աստուծոյ՝ որ իրեն առիթ ընծայեց Վիեննայի մէջ հռովմէական-կաթողիկէ աստուածաբաններու հետ քրիստոնեական երկխօսութեան ձեռնարկելու եւ լաւ արդիւնքներու հասնելու:

Ցիրաւի 1971-1988 թուականներուն՝ Հռովմէական-Կաթողիկէ Եկեղեցին եւ Հին Արեւելեան Եկեղեցիները 5 միջազգային աստուածաբանական խորհրդակցութիւններ կատարեցին՝ որոնց երկու ատենապետներէն մին ինքն էր եւ գեղեցկայարմար կերպով ղեկավարեց քննարկումները, որոնց ընթացքին, առաջին իսկ նիստին, երկու կողմերու աստուածաբանները խմբագրեցին համաձայնական քրիստոնեական բանաձեւ մը:

Երեկոյեան էքիմենիք պաշտամունքի սկիզբը եւ աւարտին՝ յանուն Հայ Առաքելական Համայնքի եւ Եկեղեցական Վարչութեան ողջոյնի եւ շնորհակալութեան խօսք արտասանեց՝ Դր. Արմենակ Իւթիճեան, Փոխատենապետ Վարչութեան:

Ցաւարտ հանդիսաւոր արարողութեան՝ ներկաները համախմբուեցան Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ մեծ սրահին մէջ, ուր հիւրասիրուեցան հայկական ճոխ ճաշասեղանով, պատրաստուած Վեննահայ ժրաջան Տիկնանց Ցանձնախումբի կողմանէ: Այստեղ եւս գնահատական խօսքեր արտասանեցին՝ Ցունաց Մետրոպոլիտ Միքայէլ Ստայքոս եւ Տիկ. Պրոֆ. Քրիստինէ Գլայքսնը, որ Ատենապետուհին է Աստրիոյ Եկեղեցիներու Էքիմենիք Խորհուրդի:

Հաւատացելոց խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասաւ՝ երբ անակնկալօրէն սրահ մուտք գործեց Վսեմաշուք Կարդինալ Դր. Ֆրանց Քէօնիկ, Վիեննայի նախորդ Արքեպիսկոպոսը, 97 տարեկան, որ այս տարի նշեց իր եպիսկոպոսական ձեռնադրութեան 50-ամեակը: Ցոբելեար Սրբազանը եւ Կարդինալ Քէօնիկ միասնաբար կտրեցին տարեդարձի քաղցրահամ կարկանդակը, զոր պատրաստած էր Տիկ. Սուրենեանի կողմանէ:

Երկրորդ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հոկտ. 24-ի գիշերը, երբ Մեսրոպ արքեպիսկոպոսի ծննդեան 70-ամեակի առթիւ շուրջ 70 բարեկամներ Համայնքէն համատեղուեցան Մառիոթ Պանդոկը եւ վայելուչ ընթրիքով մը տօնախմբեցին զոյգ յոբելեանները: Ընթրիքին կը մասնակցէին նաեւ էքիմենիք հիւրեր,- դարձեալ Ցունաց Մետրոպոլիտը, Աւետարանական Եկեղեցւոյ Եպիսկոպոս պատուելի Հերուիգ Շտուրմ, աւետարանական պատուելի Պրոֆ. Վերնըր Հոռն, Տիկ. Պրոֆ. Քրիստինէ Գլայքսնը, Հայաստանի Հանրապետութեան Աստրիոյ եւ Հունգարիոյ լիազօր Դեսպան Դր. Ջիվան Թապիպեան եւ բարերար Դր. Վլադիմիր Արութիւնեան:

Եկեղեցական Վարչութեան ատենապետ ինժ. Գէորգ Անտոնեան կուռ խօսքերով դրրուատեց Սրբազան Հօր 50 տարուան ծառայութիւնը ընդհանրապէս Հայ Եկեղեցւոյ եւ 40 տարուան հովուական-առաջնորդական գործունէութիւնը Աստրիոյ մէջ եւ առ այդ սրտագին շնորհակալութիւն յայտնեց յանուն հայ առաքելական Համայնքին: Ատենապետին խօսքը գերմաներէնի թարգմանեց փոխ-ատենապետ Դր. Արմենակ Իւթիճեան եւ միաժամանակ կարդաց գերմաներէն լեզուով՝ Վեհափառ Հայրապետին սրբատառ կոնդակը եւ նախագահ Դր. Թոմաս Քլեստիլի շնորհաւորական հեռագիրը:

Բոստոնէն անուանի «բարիտոն» եւ սարկաւագ Արմէն Տիլան երգեց մի քանի հայկական երգեր եւ իտալական երաժշտական գործեր: Գնահատական խօսքերով ելոյթ ունեցան՝ Յունաց Մետրոպոլիտը, Աւետարանական Եպիսկոպոսը եւ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը: Հանդիսութիւնը աւարտուեցաւ տարեդարձի շքեղ կարկանդակով եւ Սրբազան Հօր փակման խօսքով: Սրբազանը բացատրեց եւ կարեւորեց մարդկային կեանքի մէջ նպատակի մը կամ գործի մը իրականացումը: Նա յիշեց Յովհաննէս Թումանեանի «Մահը մերն է, մենք մահինը, մարդու գործն է միշտ անմահ» եւ Վահան Թէքէեանի «Ինչ մնաց. կեանքէն ինծի ինչ մնաց. ինչ որ տուի ուրիշին՝ տարօրինակ այն միայն» իմաստուն խօսքերը:

Ուշ գիշերին՝ շնորհաւորական խօսքերով եւ նուէրներու մատուցմամբ՝ հանդիսականները բաժնուեցան Մեսրոպ արքեպիսկոպոսէն: Եկեղեցական Վարչութիւնը Սրբազան Հօր նուիրեց ոսկեայ գեղեցիկ ժամացոյց՝ յատուկ արձանագրութեամբ:

Երրորդ եւ վերջին հանդիսութիւնը կազմակերպուած էր Վիեննայի հոմոմէական-կաթողիկէ «Փրօ Օրիէնթէ» Հաստատութեան կողմանէ՝ Բշ. 11 Նոյմբ. 2002 թ. երեկոյեան, Դիւանագիտական Ակադեմիայի մէջ: Այս Կազմակերպութեան 1966 թուին հիմնադրութենէն ի վեր, յատկապէս 1969 թուականէն սկսեալ՝ Սրբազան Հայրը եղած է կարեւոր գործակից մը եւ բարեկամ: Օրուան հանդիսութեան նախագահն էր՝ Վիեննայի Արքեպիսկոպոս Կարդինալ Դր. Քրիստոֆ Շէօնբոռն, որ նաեւ կատարեց փակման խօսքը՝ դրուատելով Մեսրոպ արքեպիսկոպոսի էքիմենիք գործունէութիւնը եւ Հայ ժողովուրդի քրիստոնէական հզօր հաւատքը:

Հիմնարկութեան նախագահ Դր. Յովհաննէս Մարթէ ողջունեց հիւրերը, որոնք մեծ բազմութեամբ լեցուցած էին հանդիսասրահը, ներկայացուց Յոբելեարի կենսագրականը եւ գնահատեց անոր գործունէութիւնը աստուածաբանական երկխօսութեան մէջ:

Պրոֆ. Ֆիլիփ Հառնոնքուր ունկնդիրներուն մանրամասնօրէն ներկայացուց Սրբազան Հօր Հայ Եկեղեցւոյ նուիրեալ 300 էջանոց գերմաներէն գիրքը եւ գովաբանեց գործին գիտական բարձր որակը եւ էքիմենիք ոգին:

Պրոֆ. Պետրը Հոֆրիխթը նկարագրեց Վիեննայի հինգ միջազգային աստուածաբանական խորհրդակցութիւնները (1971-1988) եւ Յոբելեարի կարեւոր նպաստը այդ ժողովներուն: Ապենապետ ինժ. Գէորգ Անտոնեան կարճ խօսքով շնորհաւորեց Սրբազան Հօր զոյգ յոբելեանները եւ շնորհակալութիւն յայտնեց Աւստրիոյ մէջ իր 40 տարուան բեղմնաւոր գործունէութեան համար:

Բեռլինէն պատուելի Մագիստրոս Մանֆրէդ Ռիխտը Լեփսիուսի հետեւողութեամբ խօսեցաւ Հայ ժողովուրդի խաչելութեան եւ տառապանաց մասին եւ յանուն Աւետարանական Եկեղեցւոյ առաջարկեց յեր այսորիկ Յոբելեարը կոչել «Մեսրոպ Շնորհալի» պատուանունով: Հանդիսութիւնը աւարտեցաւ Սրբազան Հօր ընդարձակ բանախօսութեամբ՝ նուիրեալ Հայ Եկեղեցւոյ առանձնայատկութիւններուն: Ընդերկար ծափահարութեամբ հանրութիւնը գնահատեց դասախօսութիւնը եւ դասախօսը:

Դոկտ. Մեսրոպ արքեպս. Գ. Գրիգորեանի ծննդեան 70-ամեակի եւ Աստրիոյ մէջ հովուական-առաջնորդական գործունէութեան 40-ամեակի զոյգ յոբելեաններու առթիւ՝ Սրբազան Հօր ի սրտէ կը մաղթենք կենաց արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

ԻՐԱՋԵԿ

Վիեննա, 26 Նոյեմբ. 2002 թ.